

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱԶԱԿՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Եվրամիությունը այն եզակի կառույցներից է, որի համագործակցների և գործընկերների թիվը աշխարհում հասնում է գրեթե առավելագույնի: Ներկայումս Եվրամիությունը դիվանագիտական հարաբերությունների մեջ է աշխարհի շուրջ 130 երկրների հետ, ավելի քան 60 երկրների հետ կնքել է տարբեր տիպի երկկողմ պայմանագրեր, ինչպես նաև ունի համաձայնագրեր Աֆրիկայի, Կարիբյան ծովի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի 69 երկրների հետ: Միևնույն ժամանակ դոնոր գործունեության իրականացման բնագավառում Եվրամիությունը Համաշխարհային բանկի, USAID-ի, UNDP-ի, IMF-ի և GTZ-ի հետ միասին կազմում է աշխարհի դոնոր գործունեություն իրականացնող կազմակերպությունների լավագույն օղակը: Ներկայումս Եվրամիությունը աջակցություն է ցուցաբերում բազմաթիվ տարածաշրջանների և երկրների՝ սկսած աշխարհի ամենահետամնաց և աղքատ երկրներին պարենային ապահովության և ամենաանհրաժեշտ կենսամիջոցներով հումանիտար օգնության տրամադրումից մինչև Եվրամիության անդամակցության համար դիմած թեկնածու երկրներին խորհրդատվության մատուցումն ու տեխնիկական աջակցությունը: Եվրամիության կողմից վերոնշյալ երկրներին տրամադրվող աջակցությունն ընդգրկում է հետևյալ հիմնական ուղղությունները՝

1. PHARE աջակցության ծրագիր,
2. SAPARD աջակցության ծրագիր,
3. ISPA աջակցության ծրագիր,
4. CARDS աջակցության ծրագիր,
5. MEDA աջակցության ծրագիր,
6. TACIS աջակցության ծրագիր:

2007թ.-ից սկսած՝ Եվրոպական հանձնաժողովը նախաձեռնել է աննախադեպ մի նոր աջակցության մեխանիզմ Եվրոպական հարևանության քաղաքականություն անվանումով:

1. **PHARE աջակցության ծրագիրը** Եվրամիության կողմից իրականացվող անհատույց ֆինանսական օժանդակության ծրագիր է, որն ուղղված է աջակցելու Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի թեկնածու երկրներին Եվրամիությանն անդամակցելու նախապատրաստական աշխատանքներում: PHARE (Poland and Hungary Assistance Reconstruction Economy) ծրագիրը ստեղծվել է դեռևս 1989թ.՝ աջակցելու ժողովրդավարությանը և շուկայական տնտեսության սահուն անցմանը Լեհաստանում և Հունգարիայում: Հետագայում PHARE ծրագրի ընդլայնումը ընդգրկեց նոր թեկնածու երկրներ, որոնք գտնվում էին Եվրամիության անդամակցության նախապատրաստման փուլում: Այդ երկրների մեջ էին Մերձբալթյան երեք երկրները, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներ, ինչպես նաև Մալթան, Կիպրոսը և Թուրքիան: Ներկայումս PHARE ծրագիրն ընդգրկում է Թուրքիան, Խորվաթիան ու Մակեդոնիան՝ նախկին Հարավսլավիայի Հանրապետությունը: Ծրագիրն ուղղված է նախանդամակցային փուլում գտնվող երկրներին աջակցության ցուցաբերմանը ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման և օրենսդրությունների համահարթեցման գործընթացներում:

2. **SAPARD (Special Accession Programme for Agriculture and Rural Development)** աջակցության ծրագիրն ուղղված է աջակցելու Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի 10 շահառու և նորանդամ երկրներին՝ դյուրացնելու նրանց խնդիրները գյուղատնտեսության և ագրարային ոլորտում, ինչպես նաև աջակցելու ընդհանուր ագրարային քաղաքականության իրակա-

նացմանը և դրան առնչվող օրենսդրությանը, քանի որ ագրարային զարգացման քաղաքականությունը միջանկյալ օղակ է շուկայաբանության, շրջակա միջավայրի պաշտպանության և տարածաշրջանային զարգացման միջև: SAPARD ծրագիրը ստեղծվել է 1999թ. հունիսին՝ 2000-2006թթ. ժամանակահատվածում Եվրամիության նախաանդամակցային երկրներին ցուցաբերվող օժանդակության բարելավման նպատակով:

3. ISPA (Instrument for Structural Policies for Pre-Accession) աջակցության ծրագիրը Եվրամիության նախաանդամակցային այն աջակցության գործիքն է, որն ուղղված է աջակցելու շրջակա միջավայրի և տրանսպորտի ենթակառուցվածքների զարգացմանը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում: ISPA ծրագիրը ստեղծվել է 1999թթ., որը, ինչպես և PHARE ծրագիրը, ուղղված են կատարելագործելու սոցիալ-տնտեսական զարգացումները, սակայն ISPA ծրագիրը միայն ֆինանսավորում է շրջակա միջավայրի և տրանսպորտի ոլորտի ծրագրերը, որի շրջանակներում աջակցությունը հիմնականում ուղղված է ազգային ճանապարհային ցանցի և միջեվրոպական ցանցի զարգացմանը, ինչպես նաև նավահանգիստների և օդանավակայանների կառուցմանը:

4. Եվրամիությունը CARDS (Community Assistance for Reconstruction, Development and Stabilization) աջակցության ծրագրի միջոցով օժանդակություն է ցուցաբերում Արևմտաբալկանյան երկրներին՝ Ալբանիային, Սերբիային, Չեռնոգորիային, Բոսնիային և Հերցեգովինային, Խորվաթիային և Մակեդոնիային՝ նախկին Հարավսլավիայի Հանրապետությանը: Եվրամիության հիմնական աջակցությունը այս տարածաշրջանում ուղղված է կայունության և խաղաղության հաստատմանը հումանիտար հենքի վրա, քանի որ այս տարածաշրջանի ներքին հակամարտությունները միջամտության կարիք ունեն:

5. MEDA աջակցության ծրագիրը Եվրամիության և Միջերկրական ծովի տարածաշրջանի երկրների համագործակցության հիմնական ֆինանսական գործիքն է: Այն ընդգրկում է իրականացման երկու փուլ՝ MEDA I և MEDA II: MEDA I ծրագրի շրջանակներում իրականացվող ծրագրերը իրականացվում էին երեք հիմնական ուղղություններով՝ անցումային տնտեսություն, սոցիալ-տնտեսական հավասարակշռության հզորացում և ժողովրդավարության ու քաղաքացիական հասարակության հզորացում: II փուլի շրջանակներում իրականացվող աջակցության հիմնական ոլորտներն են՝ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը, Acquis communautaire՝ Եվրամիության ընդհանուր օրենսդրության համահարթեցումը, տարածաշրջանային քաղաքականությունները և ընդերքի նախագծումը:

6. 1991թ. նախաձեռնված TACIS տեխնիկական աջակցության ծրագիրը (Technical Assistance to the Commonwealth of Independent States) դրամաշնորհների միջոցով ֆինանսական աջակցություն է ցուցաբերում Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի 12 երկրներին՝ Հայաստանին, Ադրբեջանին, Վրաստանին, Բելառուսին, Ղազախստանին, Ղրղզստանին, Մոլդովային, Ռուսաստանին, Տաջիկստանին, Ուկրաինային, Ուզբեկստանին և Թուրքմենստանին (Մոնղոլիայում Tacis ծրագիրը իրականացվում էր 1991-2003թթ., իսկ այժմ այն ALA ծրագրի շահառուն է): Ծրագիրը հիմնականում ուղղված է վերոնշյալ երկրներում անցումային տնտեսության դժվարությունների հաղթահարման աջակցմանը:

Tacis ծրագրի հիմնադրման պահին այն միայն տեխնիկական աջակցություն էր ապահովում, մինչդեռ այժմ Tacis ծրագիրը Եվրամիության և 12 երկրների միջև բազմակողմանի հարաբերությունների համալիրի ընդամենը մեկ բաղադրիչ է: Իսկ ավելի ուշ Գործընկերության և համագործակցության համաձայնագրի իրականացման շրջանակներում Tacis ծրագիրը դարձավ Եվրամիության և գործընկեր երկրների միջև համագործակցության գործընթացում ավելի հզոր ռազմավարական գործիք:

Tacis ծրագրի իրականացման համար իրավական հիմք է Եվրախորհրդի 1999թ. դեկտեմբերի 2-ի N 99/2000 կանոնակարգը, որն ապահովում է Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական

Ասիայի գործընկեր երկրների աջակցության դրույթները, և ըստ կանոնակարգի ծրագիրը տևեց մինչև 2006թ. վերջը, սակայն ծրագրի շրջանակներում իրականացվող գործողությունները դեռևս շարունակվում են: Tacis ծրագրի կանոնակարգը հիմնված է այն հասկացողության վրա, որ համագործակցությունը փոխշահավետ գործընթաց է, որը դրսևորվում է «պահանջարկի վրա հիմնված կառավարումից» մինչև «երկխոսության վրա հիմնված կառավարում» ծրագրավորման ձևով: Ավելի ճկուն ճանապարհով Tacis ծրագրի իրականացումը հնարավորություն է տալիս պոտենցիալ տեխնիկական աջակցության շարժունակությանը և իրականացվում է յուրաքանչյուր գործընկեր երկրի կարողություններին համապատասխան:

Tacis ծրագրի կանոնակարգը սահմանում է համագործակցության հետևյալ քեմատիկ ոլորտները՝

- աջակցություն ինստիտուցիոնալ, իրավական և վարչական բարեփոխումներին,
- աջակցություն մասնավոր հատվածին և աջակցություն տնտեսական զարգացմանը,
- աջակցություն անցումային շրջանի սոցիալական հետևանքներին,
- ենթակառուցվածքների ցանցի զարգացում,
- շրջակա միջավայրի պաշտպանության խթանում և բնական ռեսուրսների կառավարում,
- ագրարային տնտեսության զարգացում,
- աջակցություն ատոմային անվտանգությանը:

Ինչպես արդեն նշվեց, Tacis ծրագիրը իր առաքելությունը սկսել է իրականացնել Հայաստանի Հանրապետությունում դեռևս 1991թվ.-ից: Այդ ժամանակահատվածում Հայաստանը կրում էր ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքները: Հայաստանում իսպառ վերացել էր նախկին քաղաքական համակարգը, և դեռևս չէր ձևավորվել նորը, Հայաստանը ձգտում էր անկախանալ, որի համար չկային անհրաժեշտ նախապայմաններ: Իսկ 1991թ. սեպտեմբերի 21-ի անկախացումից հետո պատասխանատվության աննկարագրելի աճը և համակարգափոխության արագընթաց իրականացումը խուճապի մատնեցին քաղաքական առաջնորդներին ու ղեկավարներին, քաղաքականությամբ զբաղվողների առջև դրվեց նոր գերխնդիր՝ կանխատեսել անորոշ ապագան: Երկրում տեղի ունեցող փոթորկալից իրադարձություններն ու արմատական փոփոխությունները բացասական հետևանքներ ունեցան մասնավորապես տնտեսության մեջ. փակվեցին հզոր արդյունաբերական ձեռնարկությունները, դադարեց կանոնավոր առևտուրը, սոցիալական ոլորտը մատնվեց բացարձակ անուշադրության, գործազրկության մակարդակի կտրուկ աճն ու հիպերինֆլյացիան հանրապետությունը ծայրահեղ ճգնաժամային իրավիճակի մեջ զցեցին: Այդ պարագայում տնտեսությունը չէր կարող մտածել բարեփոխումների մասին, արդեն տնտեսական աճի խնդիր չէր, այլ հացի խնդիր:

Հենց այդ ժամանակահատվածում Եվրամիությունը հանդես եկավ նախաձեռնությամբ՝ օժանդակություն ցուցաբերել Հայաստանին՝ մեղմելու անցումային շրջանի բացասական հետևանքները:

Ուստի այդ հիմնախնդիրների լուծման նպատակով այդ տարիներին Եվրամիության հիմնական օժանդակությունը դրսևորվում էր հումանիտար օգնության ձևով, որը իրականացվում էր ECHO ծրագրի միջոցով: Բացի հումանիտար օգնությունից, Եվրամիության աջակցության շրջանակներում էական դեր ուներ մասնավորապես պարենային ապահովությունը, որը բնութոյվ կարելի է նմանեցնել բայց չի կարելի նույնացնել հումանիտար օգնության հետ, քանզի հումանիտար օգնությունը օժանդակության ավելի լայն շրջանակ է նախատեսում:

Հետագայում ճգնաժամի հաղթահարման և տնտեսական զարգացման միտումների առկայության դեպքում անհրաժեշտություն առաջացավ նոր ընթացք տալ Եվրամիություն-Հայաստանի Հանրապետություն փոխհարաբերություններին, որոնք միտված էին հումանիտար օգնության տրամադրումը վերածել երկկողմանի քաղաքական և տնտեսական հզոր համագործակցային հարաբերություններին:

Արդեն համագործակցային հիմքի վրա խաթմված նոր հարաբերությունները կանոնա-
կարգվեցին 1996թ. ստորագրված և 1999թ. ուժի մեջ մտած Գործընկերության և համագոր-
ծակցության համաձայնագրով (Partnership and Cooperation Agreement), որը ներկայումս
Եվրամիություն-Հայաստանի Հանրապետություն փոխհարաբերությունների միակ առանցքային
փաստաթուղթն է: Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը կնքվել է մի
կողմից Հայաստանի Հանրապետության և մյուս կողմից Եվրոպական համագործակցություն-
ների ու դրանց անդամ պետությունների միջև ու ստորագրվել է 1996թ. ապրիլի 22-ին Լյուքսեմ-
բուրգում՝ Եվրամիության շրջանակներում հարավկովկասյան երեք պետությունների ղեկավար-
ների հանդիպման ընթացքում (նման համաձայնագրեր ստորագրվել են նաև Վրաստանի և
Ադրբեյջանի հետ):

Գործընկերության և համագործակցության համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո
Հայաստան-Եվրամիություն հարաբերությունները մտան որակական նոր փուլ: Գործընկե-
րության և համագործակցության համաձայնագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետու-
թյունը և համագործակցության անդամ պետությունները ցանկանում են հզորացնել միջհանրա-
պետական կապերը, հաստատել գործընկերություն և համագործակցություն, ինչը նպաստելու է
նախկինում հաստատված հարաբերությունների ամրապնդմանը և ընդլայնմանը: Համաձայ-
նագրի շրջանակներում կողմերը պարտավորվում են ամրապնդել գործընկերության հիմքը
կազմող քաղաքական և տնտեսական կապերը, միաժամանակ նպատակ ունեն նպաստել
միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը, ինչպես նաև վեճերի՝ խաղաղ ճանապար-
հով լուծմանը, քանզի օժանդակությունը Հայաստանի Հանրապետության անկախության,
ինքնիշխանության և տարածքային ամբողջականության գործընթացներում կնպաստի Եվրո-
պայում խաղաղության և կայունության ապահովմանը: Համաձայնագրի համակողմանի իրա-
գործումը պայմանավորված է երկուստեք և նպաստում է Հայաստանի Հանրապետությունում
քաղաքական, տնտեսական և իրավական բարեփոխումների գործընթացի նախաձեռնմանը: Այս
համաձայնագրի շրջանակներում Եվրամիությունը ցանկանում է օժանդակություն տրամադրել
Հայաստանի Հանրապետությանը տնտեսական համագործակցության և տեխնիկական օժան-
դակության ծրագրերի միջոցով:

Գործընկերության և համագործակցության Համաձայնագրի շրջանակներում Եվրամիու-
թյան և Հայաստանի Հանրապետության միջև հաստատվում են բազմակողմանի հարաբերու-
թյուններ՝ ներառելով համագործակցության հետևյալ թեմատիկ եզրերը՝

- քաղաքական երկխոսություն,
- ձեռնարկատիրական գործունեություն և ներդրումներ,
- կապիտալ և ընթացիկ վճարումներ,
- մտավոր սեփականության պաշտպանություն,
- օրենսդրական համագործակցություն,
- տնտեսական համագործակցություն,
- ժողովրդավարություն և մարդու իրավունքների պաշտպանություն,
- ապօրինի գործողությունների կանխում, անօրինական ներգաղթի կանխարգելում և
վերահսկողություն,
- մշակութային համագործակցություն:


Ուստի, այս ոլորտների շրջանակներում իրականացվող տեխնիկական աջակցությունը
միտված է տնտեսության կայունության ապահովմանը: Այս աջակցությունը էական դեր է
խաղում տնտեսության բարեփոխումների գործընթացում, որի վերլուծությունը հնարավորություն
է տալիս ակնհայտորեն տեսնել այդ աջակցության արդյունավետությունը:

Tacis ծրագրի շրջանակներում հատկացվող աջակցության վերլուծության ժամանակ
անհրաժեշտություն է առաջանում քննարկել խնդրո առարկա երեք կարևոր հիմնահարցեր՝


1. Tacis աջակցության ծրագրի դրամաշնորհների հատկացման հիմնական ուղղվածությունը,
2. Tacis ծրագրի դրամաշնորհների բաշխման ուղղությունները ըստ տնտեսության ճյուղերի,

3. Tacis ծրագրի իրականացման գործընթացն ապահովող ծրագրերը:

Հայաստանի Հանրապետությունում Tacis ծրագրի շրջանակներում Եվրոպական հանձնաժողովը տեխնիկական աջակցություն է ցուցաբերում դրամաշնորհային ծրագրերի միջոցով: Դրամաշնորհ հասկացությունը կարելի է բնորոշել որպես միջպետական դոտացիա՝ անհատույց տրվող ֆինանսական օժանդակություն, որը տրվում է Եվրամիության բյուջեից Հայաստանի Հանրապետությանը՝ ապահովելու բաղադրական, տնտեսական սոցիալական կայունություն և զարգացում: Tacis ծրագրի շրջանակներում դրամաշնորհների տրամադրումը իրականացվում է մի շարք խմբաբանակներով, որոնց բաշխումը, ըստ ուղղվածությունների և ըստ տարիների, ցույց է տրված ստորև բերված գրաֆիկներում:




Գրաֆիկ 1. Tacis ծրագրի շրջանակներում իրականացվող դրամաշնորհների հատկացման ուղղվածությունների ընդհանուր տոկոսային հարաբերակցությունը:



Գրաֆիկ 2. Tacis ծրագրի շրջանակներում տրամադրվող դրամաշնորհների բաշխվածությունը ըստ տարիների:

Tacis ծրագրի շրջանակներում տրամադրվող դրամաշնորհները ուղղված են տնտեսության մոտ 20 ճյուղերում բարեփոխումների իրականացմանը, որոնց միջև կապը ցույց է տրված ներքոնշյալ գրաֆիկում:



Գրաֆիկ 3. Tacis ծրագրի դրամաշնորհների բաշխումը ըստ տնտեսության ճյուղերի (տվյալ ուղղորտում իրականացված ծրագրերի քանակը):

Վերոնշյալ հետազոտությունները թույլ են տալիս անել որոշ եզրակացություններ՝ կապված Եվրամիության աջակցության տեսանկյունից տնտեսության գերակա ուղղությունների հետ: Առաջին կարևոր հանգամանքն այն է, որ Եվրամիության աջակցության մեջ բավականին լուրջ մտտեցում է ցուցաբերվում այնպիսի հիմնախնդիրներին, ինչպիսիք են՝ ժողովրդավարությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը, մարդկային ռեսուրսների կատարելագործումը և այլն: Եվրամիության ընդհանուր քաղաքականության մեջ այս հիմնահարցերը կարևորագույն տեղ են զբաղեցնում, ինչը մասնաճյուղի է Եվրամիության ստեղծման Մասստրիխտյան համաձայնագրի՝ անդամ և թեկնածու երկրների համար սահմանված չափանիշների մեջ: Եվրամիության կողմից իրականացվող արտաքին քաղաքականության մեջ ևս գծադրվում է այս միտումը: Եվ պատահական չէ, որ Հայաստանին տրամադրվող դրամաշնորհների մեջ գերակա են հենց այս ուղղությունները:

Երկրորդ կարևոր ուղղությունն այն է, որ Եվրամիության կողմից իրականացվող ներդրումների մեծ մասը սոցիալ-տնտեսական զարգացմանն է ուղղված: Ներկայումս Հայաստանը գտնվում է անցումային փուլում, որը էապես ազդում է մեր տնտեսության վրա մի շարք բացասական առումներով: Եվրամիությունը սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված աջակցության միջոցով հնարավորություն է տալիս միաժամանակ իրականացնել երկու փոխկապակցված գործընթացներ՝ եվրաինտեգրումն ու անցումը շուկայական տնտեսության, քանզի եվրաինտեգրման, իսկ հետագայում մասնավորապես կարևոր նախապայմաններից մեկը գործող շուկայական տնտեսության առկայությունն է:

Երրորդ կարևոր խնդիրը, որի լուծումը, միանշանակ, երկրի շրջանակներում լուծելի չէ՝ ելնելով ֆինանսական և այլ լուրջ դժվարություններից, Հայաստանի Մեծամորի ատոմակայանի դեկոմիսացումն է: Եվրամիությունը 1996թ. սկսած աջակցություն է ցուցաբերում ՀՀ Էներգետիկայի նախարարությանը այս կարևորագույն խնդրի լուծման հարցում:

Կենտրոնացնելով այս երեք հիմնահարցերի կարևորությունը՝ Եվրամիությունը պատրաստ

է օժանդակելու Հայաստանին հաղթահարելու այս խնդիրները՝ հետագայում կայուն գործընկեր
և կենսամակարդակով մոտ հարևան ունենալու նպատակով:

Ամփոփելով Tacis ծրագրի շրջանակներում իրականացվող դրամաշնորհների և ծրագրերի
նկարագրերն ու վերլուծությունը՝ նշենք մի կարևոր և հիմնաքարային հանգամանք. Եվրա-
միության տեխնիկական օգնության շրջանակներում տրամադրվող աջակցությունը էապես
նպաստել է ՀՀ տնտեսության ճյուղերում էական բարեփոխումներին, և հույս ունենանք, որ սա
դեռ վերջը չէ և այն դեռ կկրի շարունակական բնույթ:

ԱՆԱՅԻՏ ՄԱՆԱՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ԱՅԿ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսական գլոբալացումը ներկայումս մեծ մարտահրավեր է և հնարավորությունների
նոր աղբյուր թե՛ զարգացած, թե՛ զարգացող երկրների համար:

Դիտարկելով զարգացող տարբեր երկրների փորձը՝ ակնհայտորեն պարզ է դառնում
նախնական շրջանում նրանց ապրած ցնցումները: Դեռ լիարժեքորեն չյուրացրած այս գաղա-
փարախոսությունը և չորդեգրած հիմնարար սկզբունքները՝ վերջինիս մարտահրավերներին
արձագանքումը նախնական շրջանում հանգեցրեց տնտեսության լճացմանը՝ անհրաժեշտ
ռեսուրսների բացակայության պատճառով:

Ի հայտ եկած խնդիրները առաջին հայացքից հեշտ լուծելի են թվում, սակայն բարդու-
թյունների հաղթահարմանը հիմնականում խոչընդոտում է հասարակության ընդվզումը ընդդեմ
նոր գաղափարախոսության: Տարիներ շարունակ ներգրավված լինելով մեկ այլ տնտեսական
համակարգում՝ այսօր հարկավոր է սեղմ ժամկետներում նորը ընկալել և գտնել կիրառության
օպտիմալ ուղիներ: Վերջինիս, ցավոք, շատ երկրներ պատրաստ չէին: Վերջիններիս
անցումային շրջանը բավականին երկար տևեց և մինչ օրս չի ավարտվել:

Տնտեսությունը բարելավելու և ի հայտ եկած խնդիրները հրատապ լուծելու նպատակով
առաջնային տարբերակը արտաքին առևտրական հարաբերությունների զարգացումն է: Այն
հնարավոր է իրականացնել՝ միջազգային մարկետինգը ուսումնասիրելով և համապատասխան
ռազմավարություն մշակելով: Ընդհանուր առմամբ մարկետինգը ծաղկում ապրեց կապիտա-
լիզմի օրոք, քանզի վերջինիս գաղափարախոսությունը ուղղված էր ինդիվիդուալիզմին և ուտիլի-
տարիզմին, որը լիովին հակասում էր մարքսիստական գաղափարախոսությանը: Այնուա-
մենայնիվ, այն իր առաջին քայլերն արեց զարգացող երկրներում՝ որպես օրինակ վերցնելով
զարգացած երկրների փորձը և հարմարեցնելով տեղական շուկայի առանձնահատկություն-
ներին: Չնայած միջազգային մարկետինգի քաղաքականությունն առաջ է քաշում մի շարք
խնդիրներ, որոնք զարգացող երկրների համար դիմակայելի չեն: Նմանատիպ խնդիրներից են
միջազգային մարկետինգի կողմից տեղի մշակույթի անտեսումը, հեղինակային իրավունքների
գերադասումը մարդու իրավունքներից, անառողջ և վտանգավոր սննդի տեխնոլոգիաների
խթանումը և էկոլոգիական տեսանկյունից վտանգավոր արտադրատեսակների սպառումը: Այս
հիմնահարցերը կարևորագույններն են մյուս բոլոր խնդիրներից, քանզի դրանք ներկայիս
ամենաշատ քննարկվող թեմաներն են: Այն հիմնախնդիր է զարգացող երկրների համար նաև